

**ՀՀ տարածքային կառավարման նախարարության կարիքների համար տպագրական աշխատանքների գնման մրցույթի հայտարարություն /հրապարակվել է 22.04.2013թ.**

«ՀՀ ՏԿՆ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով մրցույթի շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2013 թվականի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ԳԱԿ- ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով մրցույթի շրջանակներում կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված աշխատանքները:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 2 հասցեով, N 505 սենյակ, մինչև 2013 թվականի մայիսի 3-ը, ժամը 11:00-ն:

Հայտերը կբացվեն Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 2 հասցեում, N 505 սենյակում, 2013 թվականի մայիսի 3-ին, ժամը 11:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Գնման նախնական պայմանագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

**Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր**  
**ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ**  
**N ՀՀ ՏԿՆ ՇՀԱՇՁԲ-11/3---**

ք. Երևան

«-----» «-----» 2013 թ.

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Կ. Իսախանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և -----, ի դեմս Ընկերության տնօրեն -----ի (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### **1. Պայմանագրի առարկան**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով նախատեսված տպագրական աշխատանքներ (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Աշխատանքները և վճարել դրա համար:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կապալառուն համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

1.3 Կապալառուն Աշխատանքի արդյունքը հասցնում է Պատվիրատուին:

### **2. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

#### **2.1 Պարզվիրություն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից կատարվող Աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը.

2.1.2 Առանց Աշխատանքների արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և (կամ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը և Աշխատանքը չի կարող կատարվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

2.1.3 Չընդունել Աշխատանքների արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը.

2.1.4 Մինչև Աշխատանքների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Կապալառուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կապալառուին:

#### **2.2 Պարզվիրություն պարզավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան կատարված Աշխատանքների արդյունքը, իսկ Աշխատանքների արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կապալառուին:

2.2.2 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում Աշխատանքների արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### **2.3 Կապալառուն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան կատարված Աշխատանքների արդյունքը:

2.3.2 Մինչև Աշխատանքների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու փաստացի կատարված Աշխատանքների համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.3 Մինչև Աշխատանքների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով:

2.3.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 1.1 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### **2.4 Կապալառուն պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքների կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

## **3. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը**

3.1 Կապալառուն Աշխատանքների (Աշխատանքների առանձին փուլի) կատարման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքները չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Կապալառուի կատարած Աշխատանքների արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

## **4. Պայմանագրի գինը**

4.1. Սույն պայմանագրով նախատեսված գնման առարկայի միավորի գինը ներկայացված է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N2 հավելվածում: Սույն պայմանագրով Կապալառուի կատարած Աշխատանքների ընդհանուր գինը, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է ----- (-----) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները:

4.2 Պատվիրատուն իրեն կատարած Աշխատանքների դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով (հավելված N 3), նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա

ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքների դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, բայց ոչ ուշ քան մինչև 25.12.2013թ.:

## **5. Կողմերի պատասխանատվությունը**

5.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքների կատարման որակի և սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, ինչպես նաև 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքները չընդունվելու, Աշխատանքները չկատարելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ համապատասխան Պայմանագրի գնի 0,5%-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ Պայմանագրի գնի 0,05%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքներ կատարելու արդյունքում Կապալառուին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ ուշացված յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. Այլ պայմաններ**

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2013թ-ի դեկտեմբերի 25-ը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն

իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կապալառուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ:

Աշխատանքների կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

Սույն պայմանագրում չի կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Սույն պայմանագրի ապահովման չափը կազմում պայմանագրի գնի տաս տոկոսը: Ընդ որում, սույն պայմանագրով նախատեսվում է, որ պայմանագրի կատարման ապահովում ներկայացրած անձը՝ Վաճառողը, պարտավոր է ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնարդին:

7.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.5 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած 4 թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.6 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.7 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

## 8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման  
նախարարություն  
ք. Երևան, Հանրապետության հր.  
Կառավարական տուն 2  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011003150  
Հ/Հ 900011003168  
ՀՎՀՀ 02578338

### ԿԱՊԱԼԱՌՈՒ

«-----» ---Ը  
Հասցե -----  
«-----բանկ» --Ը  
Հ/Հ -----  
ՀՎՀՀ -----

### Աշխատակազմի ղեկավար

----- Կ. ԻՍԱԽԱՆՅԱՆ  
(ստորագրություն)  
Կ.Տ

### Տնօրեն

-----  
(ստորագրություն)  
Կ.Տ

**Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր**

| <b>Չափաբաժինների համարները</b> | <b>Աշխատանքի անվանումը</b> | <b>Չափի միավորը</b> | <b>Տեխնիկական բնութագիրը</b>  |
|--------------------------------|----------------------------|---------------------|---|
| 1                              | Թղթապանակ                  | հատ                 | A4 ձևաչափի, կաշվեպատ, մուգ շագանակագույն, մետաղական գունավոր գերբով                 |
| 2                              | Այցեքարտ                   | հատ                 | Երկկողմանի կավճապատ, տպագրությունը՝ երկկողմ, չորս գույնով, ուռուցիկ տառերով         |
| 3                              | Շնորհավորագիր              | հատ                 | Չափը՝ A4, միակողմանի կավճապատ, քաշը՝ 250 գր., տպագրությունը՝ միակողմ, չորս գույնով: |
| 4                              | Վկայական                   | հատ                 | Կաշվե շապիկով, երկփեղկանի, ներդիրով, աշխատակիցների համար, մեկ փեղկի չափը՝ 10x6.5 սմ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**  
 ՀՀ տարածքային կառավարման  
 նախարարություն  
 ք. Երևան, Հանրապետության հր.  
 Կառավարական տուն 2  
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
 Հ/Հ 900011003150  
 Հ/Հ 900011003168  
 ՀՎՀՀ 02578338

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**  
 «-----» ---Ը  
 Հասցե -----  
 «-----բանկ» --Ը  
 Հ/Հ -----  
 ՀՎՀՀ -----

**Աշխատակազմի ղեկավար**

**Տնօրեն**

----- Կ. ԻՍԱԽԱՆՅԱՆ  
 (ստորագրություն)  
 Կ.Տ

-----  
 (ստորագրություն)  
 Կ.Տ

**ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Չափաբաժիններ | Գնման ենթակա տպագրական աշխատանքների |              |              | Նախատեսվում է գնել 2013թ. ընդ որում |                |                |                | Ընդամենը՝      |
|--------------|-------------------------------------|--------------|--------------|-------------------------------------|----------------|----------------|----------------|----------------|
|              |                                     |              |              | 1-ին եռամսյակ                       | 2-րդ եռամսյակ  | 3-րդ եռամսյակ  | 4-րդ եռամսյակ  |                |
|              | Անվանումը                           | Չափի միավորը | Միավորի գինը | Միորոժ քանորոժ                      | Միորոժ քանորոժ | Միորոժ քանորոժ | Միորոժ քանորոժ | Միորոժ քանորոժ |
| 1            | Թղթապանակ                           | հատ          |              |                                     | 10             | 15             | 25             | <b>50</b>      |
| 2            | Այցեքարտ                            | հատ          |              |                                     | 250            | 250            | 300            | <b>800</b>     |
| 3            | Շնորհավորագիր                       | հատ          |              |                                     | 20             | 25             | 25             | <b>70</b>      |
| 4            | Վկայական                            | հատ          |              |                                     | 20             | 20             | 25             | <b>65</b>      |
| Ընդամենը՝    |                                     |              |              |                                     |                |                |                |                |

\* Կախված ներկայացված գներից՝ քանակները կարող են փոփոխվել:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն  
 ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական տուն 2  
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
 Հ/Հ 900011003150  
 Հ/Հ 900011003168  
 ՀՎՀՀ 02578338

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«-----» --Ը  
 Հասցե -----  
 «-----բանկ» --Ը  
 Հ/Հ -----  
 ՀՎՀՀ -----

**Աշխատակազմի ղեկավար**

----- Կ. ԻՍԱԽԱՆՅԱՆ  
 (ստորագրություն)  
 Կ.Տ

**Տնօրեն**

-----  
 (ստորագրություն)  
 Կ.Տ

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

**ՀՀ դրամ**

| h/h | Գնման ենթակա աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2013թ.-ի պետական բյուջեից, ընդ որում՝ |               |               |               |          |
|-----|----------------------------------|---|---------------|---------------|---------------|----------|
|     |                                  | 1-ին եռամսյակ   | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Ընդամենը |
| 1.  | Թղթապանակ                        |   | 30%           | 65%           | 100%          | 100%     |
| 2.  | Այցեքարտ                         |   | 30%           | 65%           | 100%          | 100%     |
| 3.  | Շնորհավորագիր                    |   | 30%           | 65%           | 100%          | 100%     |
| 4.  | Վկայական                         |   | 30%           | 65%           | 100%          | 100%     |
|     | Ընդամենը                         |   |               |               |               |          |

\* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման  
 նախարարություն  
 ք. Երևան, Հանրապետության հր.  
 Կառավարական տուն 2  
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
 Հ/Հ 900011003150  
 Հ/Հ 900011003168  
 ՀՎՀՀ 02578338

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«-----» ---Ը  
 Հասցե -----  
 «-----բանկ» --Ը  
 Հ/Հ -----  
 ՀՎՀՀ -----

**Աշխատակազմի ղեկավար**

----- Կ. ԻՍԱԽԱՆՅԱՆ  
 (ստորագրություն)  
 Կ.Տ

**Տնօրեն**

-----  
 (ստորագրություն)  
 Կ.Տ



**Հավելված 4**

«-----» «-----» 2013թ. կնքված  
N° ՀՀ ՏԿՆ ՇՀԱՇՁԲ-11/3-- գնման պայմանագրի

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն  
ք. Երևան, Հանրապետության հր.  
Կառավարական տուն 2  
ՀՎՀՀ 02578338  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011003150  
Հ/Հ 900011003168

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«-----» ---Ը  
Հասցե -----  
«-----բանկ» --Ը  
Հ/Հ -----  
ՀՎՀՀ -----

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N \_\_\_\_**

ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

«-----» ----- 2013թ.

Պայմանագրի անվանումը՝ «Տպագրության աշխատանքների գնման» պայմանագիր  
Պայմանագրի կնքման ամսաթիվը «-----» «-----» 2013թ.  
Պայմանագրի համարը՝ N° ՀՀ ՏԿՆ ՇՀԱՇՁԲ-11/3--

Պատվիրատուն, ի դեմս տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի ղեկավար Կ. Իսախանյանի և Կապալառուն՝ ի դեմս «-----» --Ը-ի տնօրեն -----ի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «-----» ----- 2013թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N\_\_ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կապալառուն «-----» ----- 2013թ.-ից «-----» ----- 2013թ. ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ Աշխատանքները.

| Աշխատանքների կատարման համառոտ նկարագիրը | Կատարման քանակական ցուցանիշները | Կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---------------------------------|------------------|-------------------------------------|--------------------------------------|
| Թղթապանակ                               |                                 |                  |                                     |                                      |
| Այցեքարտ                                |                                 |                  |                                     |                                      |
| Շնորհավորագիր                           |                                 |                  |                                     |                                      |
| Վկայական                                |                                 |                  |                                     |                                      |
| Ընդամենը                                | -----                           | -----            |                                     | -----                                |

Վերոհիշյալ Աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

\_\_\_\_\_  
(ստորագրություն)

ազգանուն \_\_\_\_\_

Կ. Տ

Աշխատանքն ընդունեց

\_\_\_\_\_  
(ստորագրություն)

ազգանուն \_\_\_\_\_

Կ. Տ